

# ԱԿՆԱՐԿ՝ ԵՐԱԺՇՏԱԳԻՏ-ՄԱՆԿԱՎԱՐԺ ՀԵՂԻՆԵ ՔԱՅԱԽԵԱՆԻ ԿԵԱՆՔԻ ԵՒ ԳՈՐԾՈՒՆՔՈՒԹԵԱՆ

ՆԱՐԱԼԻ ՑԱՐՈՒԹԻՒՆԵԱՆ  
harutyunyan.natalie@gmail.com



Երաժշտագէտ եւ մանկավարժ, **ԽՍՀՄ վաստակաւոր ուսուցիչ՝ Հեղինէ Քացախեանը, լինելով ի. դարի 20ականներին Հայաստանում ձեւաւրուող նոր՝ խորհրդային կրթական համակարգի առաջնեկներից, իր երկար կեանքի ընթացքում անդադար աշխատանքի եւ ինքնակատարելագործման չնորհի դարձել էր Հայաստանի երաժշտական կրթութեան ամենահեղինակաւոր մասնագէտներից մէկը, որին սիրով եւ ակնածանքով էին վերաբերւում ոչ միայն Հայաստանում:**

**Հեղինէ Քացախեանը ծնուել է Թիֆլիսում 1908 կամ 1909ի Յունուարի 1ին<sup>1</sup>:**

Հստ իր յուշերի, նա որոշ ժամանակ յաճախել էր իր քրոջ՝ Մարգարիտի հետ Թիֆլիսի Գայիան-իան գպրոցը, սակայն որեւէ փաստաթուղթ այդ մասին չի պահպանուել, իւ նոյնիսկ իր ինքնակենսագրականում նա չի անդրադառնում այդ փաստին։ Հաւանաբար, այդ ժամանակահատուածին է վերաբերւում նաեւ իր մասնակցութիւնը եկեղեցական երգչախմբին, որի մասին նա պատմում էր միայն ընտանեկան շրջապատում։ Իր անձնական թերթիկում պահպանուած ինքնակենսագրականի համաձայն նրա ուսումնառութիւնը սկսուել է 1918ին, երբ ընդունուել է Երեւանի Միասնիկեանի Անուան Արկրորդ աստիճանի աշխատանքային դպրոցը, որն աւարտել է 1927ին։ Այդ տարիների ընթացքում բացայայտուեցին Հեղինէի բարձր աշխատունակութիւնը<sup>2</sup>, միշտութիւնը, նրա երաժշտական ընդունակութիւնները եւ առանձնակի սէրը երաժշտութեան հանդէպ, որոնք ուղեկցում էին նրան ողջ կեանքում։ Հետաքրքրական է, որ նրա առաջին քայլերը երաժշտութեան մէջ համընկել են Հայաստանի առաջին հանրապետութեան վերջին՝ 1921ի ընթացքում տեղի ունեցած երկու նշանակալի մշակութային իրադարձութիւնների։ 1921 Յունուարի 23ին կայացել է Երեւանի ժողովրդական Համալսարանի հանդիսաւոր բացումը, իսկ նոյն թուի Դեկտեմբերի 22ին բացուել էր Երեւանի Երաժշտական Ստուդիան՝ Ռոմանոս Մելիքեանի ղեկավարութեամբ։ 1924-25 ուսումնական տարում, երբ նրա կազմը Համալլուեց յատուկ հրաւիրուած մասնագէտների՝ երաժշտագէտ Սպիրիդոն Մելիքեանի, կոմպոզիտորներ Ալեքսանդր Սպենդիարեանի, Արտեմի Այվազեանի, Գիլիսովիայ Արշակ Աղամեանի եւ այլոց կողմից<sup>3</sup>, այն վերափոխուեց կոնսերվատորիայի<sup>4</sup>։ Ստուդիայում նա հետեւել է Սպենդիարեանի տեսութեան եւ կոմպոզիցիայի դասերին<sup>5</sup>, զուգահեռ յաճախելով Անա Մնացականեանի մասնագէտական դաշնարին<sup>6</sup>,

մուրի դասարան։ 1927ին Քացախեանն աւարտեց դպրոցը և Ստուդիան, իրաւունք ստանալով աշխատելու մանկապարտէզում։ Յատուկ հարկաւոր է նշել որ Միասնիկեանի Անուան Դպրոցի սաներն աւարտական դասարանում անցնում էին երաժշտութեան և նկարչութեան դասաւանդման մեթոդիկա<sup>7</sup> և դպրոցն աւարտելուց անմիջապէս յիտոյ կարող էին դասաւանդել մանկապարտէզներում երգի և նկարչութեան դասեր։ Սպ. Մելիքեանի մեթոդարանութեան<sup>8</sup> ամուր հիմքի վրայ Քացախեանը կառուցեց յիտագայում սոլֆեջիօ տեսական նիւթերի դասաւանդման իր պարզ և ազգեցիկ մեթոդը<sup>9</sup>։ Դա թոյլ տուեց նրան, դպրոցն աւարտելուց անմիջապէս յիտոյ աշխատանքի ընդունուել Հայտնարկօօպի մանկապարտէզում՝ որպէս մանկավարժ և դաշնակահարուհի, միաժամանակ շարունակելով իր ուսումը արդէն նորաստեղծ Կոնսերվատորիայում։

1929-1930 ուսումնական տարում, երբ նա դեռեւս սովորում էր Կոնսերվատորիայի Մանկավարժական Բաժանմունքում, սկսեց կազմաւորուել Հայստանի առաջին արհեստավարժ երաժշտական դպրոցը<sup>10</sup>։ 1931ին նա աւարտեց Կոնսերվատորիայի Մանկավարժական Բաժինը, իրաւունք ստանալով աշխատելու երաժշտական դպրոցում, և անյապաղ գործի անցաւ որպէս տեսական առարկաների ուսուցուչի և երգչախմբի ղեկավար<sup>11</sup>, միաժամանակ աշխատելով նաև մանկապարտէզում։ 1932ին, սակայն, տեսնելով, որ աշակերտների թիւը արագ աճում է, նա թողեց մանկապարտէզը<sup>12</sup>, լիովին նուիրուելով դպրոցին։

«Սոլֆեջիօ» և «Երաժշտական գրականութիւն» դասանիւթիւրը, որոնք նա սկսել էր դասաւանդել երաժշտական դպրոցում, պահանջում էին նոր մօտեցում, նոր մեթոդարանութիւն։ Քացախեանը ուսումնասիրում էր Ռուսաստանի փորձը այդ ասպարէզում, սակայն, իւրացնելով այն, փորձում էր միաժամանակ կիրառել այն հայկական նիւթի վրայ՝ Ժամանակը քիչ էր. հարկաւոր էր պատրաստել ապագայ լիարժէք հայ կոմպոզիտորներ և առհասարակ երաժշտուներ, որոնց ականջը<sup>13</sup> արդէն իսկ մանուկ հասակից սովոր պիտի լինէր հայ ելեւէջին, նրա կշռութաւոր և կառուցուածքային առանձնայատկութիւններին, որոնք նա պիտի կարողանար տարրերել այլ ազգերի ժողովրդական և արհեստավարժ երաժշտութիւնից։ Քացախեանը ցանկանում էր, որ երաժշտական մասնագիտական կրթութեան ծրագրերը Հայաստանում, ընդունելով Մոսկուայից ստացուած մեթոդարանութիւնն ու ծրագրերը, որոնցում գերիշխում էին եւրոպական դասական և ռուսական երաժշտութիւնը, ընդգրկեն նաև երեխաների համար մատչելի հայ երաժշտութիւն և տարէց-տարի բարդանալով, ընդգրկեն բաւականին բարդ բազմաձայն օրինակներ։ Նրա նպատակներից ամենակարեւորն այն էր, որ երեխաները զարգանան հնարաւորինս բնականոն ընթացքով, վստահութեան և սիրոյ ջերմ միջնորդութեան սովորելով լուծել ուսումնական բարդ խնդիրները ստեղծագործարար, կարծես խաղալով։ Դա վերաբերում է մասնաւորապէս սոլֆեջիոյի դասընթացին, որում երեխաները գրում են երաժշտական թելադրութիւններ և երաժշտական ստեղծագործութեան իրենց առաջին փորձերն են աճում։ Մանուկների ստեղծագործութիւնները այն ժամանակ արդէն իսկ տպագրում էին Պիոնէր Կանչ և այլ մանկական թերթերում<sup>14</sup>։

Այդ անկաշկանդ, հետաքրքրասիրութիւնը արթնացնող մթնոլորտում է, որ մեծացել են այժմ մեծանուն երաժշտներ՝ կոմպոզիտորներ Առնօ Բարաջանեանը, Էղուարդ Միրզոյանը<sup>15</sup> Ալեքսանդր Յարութիւնեանը, Աղամ Խուդոյեանը, Ղազարոս Սարեանը, Գագիկ Հովունցը, Էղդար Յովհաննիսեանը, Ռոբերտ Ամիրիսանեանը, Մարտին Վարդապարեանը, կատարողներ՝ Օնիկ Ֆարաջանեանը, Արեւիկ Աւդալբեկեանը, Յակոբ Վարդանեանը, Աղիկ Մատինեանը, Կարէն Կոստանեանը, Ալեքսանդր Զառչեանը, Նելլի Դանիէլ-Բէկը, Զեմֆիրա Բարսեղեանը, Աղա Յակոբեանը, Եաչա Զարգարեանը, Կարապետ Հայրապետեանը, երաժշտագէտներ՝ Մագարիտ Յարութիւնեանը, Գէորգ Գէօդակեանը, Նովալիս Դերոյեանը, Մարգօ Բրուտեանը, Քնարիկ Գրիգորեանը<sup>16</sup>, Թերեզա Արագեանը, Զուլինետա Ալաւերդեանը եւ բազմաթիւ այլ երաժշտներ, որոնք ոչ միայն փայլել են համաշխարհային ասպարէզում, այլև իրենց հերթին կրթել են երաժշտների յաջորդ սերունդները<sup>17</sup>:

1941ին, չբաւարարուելով Երեւանի Կոնսերվատորիայի Մանկավարժական Բաժնում ստացած իր գիտելիքներով, Քացախեանը մեկնում է Մոսկուա, որպէսզի ընդունուի Մոսկուայի Կոնսերվատորիայի Երաժշտագիտական Բաժնը: Սակայն սկսում է Հայրենական Մեծ Պատերազմը, եւ նա վերադառնում է Երեւան, եւ, չնայած պատերազմի դժուարութիւններին, 1941ին կրկին ընդունում է Երեւանի Կոնսերվատորիա եւ 1946ին աւարտում է այն որպէս երաժշտագէտ<sup>18</sup>:

1946ից մինչեւ 1969 Քացախեանը աշխատում է նաև Կոնսերվատորիային կից Զայկովսկու Անուան՝ տաղանդաւոր Երեխանների համար նորաստեղծ Երաժշտական Տասնամեակում: Այդ դպրոցում նրա սաներն էին կոմպոզիտոր Մ. Վարդապարեանը, դիրիժոր Մելիք Մալխակալեանը, երաժշտագէտ Արմէն Բուղաղեանը, թաւզութակահար Ջոն Գէորգեանը, ալտահար Արթուր Սուլթանեանը, դաշնակահարներ Մաղլինա Բաղալեանը, իրինա Մեղրակեանը եւ այլ տաղանդաւոր երաժշտներ:

1953ին Քացախեանը նշանակվում է Ալեքսանդր Սպենդիարեանի Անուան Դպրոցի տնօրէնի ուսումնական խնդիրների տեղակալ:

Ամփոփելով իր դասաւանդման փորձը, նա գրում էր մեթոդական ձեռնարկներ, որոնցից առաջինը նրա հանրայայտ Մոլֆեջիոն էր (Երեւան, 1959): Դա Խորհրդային Հայաստանում ստեղծուած սոլֆեջիոյի աննախադէպ մի դասագիրք էր, որը կազմուած էր բացառապէս հայ երաժշտութեան նմուշներից: Դրան կարօտ էին թէ՛ ուսուցիչները, եւ թէ՛ երեխաները: Հասկանալի պատճառներով դասագրքում չեն ընդգրկուած հայ հոգեւոր երաժշտութեան նմուշները<sup>19</sup> եւ որոշ, խորհրդային տարիներին արգելուած հայրենասիրական երգեր, օրինակ՝ «Զարթիր, Լաօ» երգը: Միեւնոյն ժամանակ, դասագրքում զետեղուած է այդ երգի նոր տարրերակը (տե՛ս 172՝ Բարաջանեանի «Երիտասարդական»ը), որից կարելի է կռահել, որ այդ երգը կոմպոզիտորին քաջ ժանօթ է եղել, եւ որ հեղինակը ցանկացել է, որ «Զարթիր, Լաօ»ի մեղեդին, թէկուզ եւ տարրերակմամբ քողարկուած լինելով, այնուամենային հնչի եւ արթնացնի հայ մարդու հայրենասիրական զգացմունքները:

Դասագրքի նիւթը ներկայացուած է 5 բաժիններով, որոնցից առաջին եւ երկրորդ բաժիններում ընտրուած են պարզ չափերի մէջ գրուած մեղեդիներ, որտեղ ուսուցչի ուշադրութիւնը կարող է կենտրոնանալ հետզհետէ աւելի

բարդ տոնայնութիւններում երեխաների լսողութիւնը վարժեցնելու խնդիրներին: Երրորդ եւ չորրորդ մասերում հիմնական ուշադրութիւնն ուղղուած է կշռութաւոր բազմազան բարդութիւնների վրայ, իսկ հինգերորդում՝ երկճայն երգեցողութեան վրայ, որն, ինչպէս յայտնի է, բազմաձայն երգեցողութեան բանալին է:

Սոլֆեջիոյի առաջին հայկական դասագիրքը երաժշտական դպրոցների համար առանձնանում է նախկինում տպագրուած երաժշտութեան դասադրքերից ոչ միայն բազմաձայնութեան եւ այլ երաժշտական խնդիրների հանդէպ առանձնակի ուշադրութեամբ, այլեւ երաժշտական նիւթի բազմազանութեամբ:

Այստեղ են կոմիտասի, Ռ. Մելիքեանի, Սպ. Մելիքեանի, Վալիա Սամուէլեանի, հայկական ժողովրդական երգերի ձայնագրումները, Քրիստափոր Կարա Մուրզայի, Կոմիտասի, Ռ. Մելիքեանի, Գրիգոր Սիւնու, Մուշեղ Աղայեանի, Թաթուլ Ալթունեանի, Գայլիանէ Զերոտարեանի եւ այլոց ժողովրդական երգերի մշակումները: Բացի դրանից, ընդգրկուած են յայտնի կոմպոզիտորներ Սպենդիարեանի, Ռ. Մելիքեանի, Անուշաւան Տէր-Ղեւոնդեանի, Ա. Մանուկիանի, Միքայէլ Միքոզայեանի, Մարտին Մազմանեանի, Անտոն Մայլեանի, Կարօ Զաքարեանի, Նիկողայոս Տիգրանեանի մեղեդիները, հատուածներ Ա. Մանուկեանի «Չարի Վերջը», Մ. Մազմանեանի «Ճուտիկ», Սարգիս Մուրադեանի «Շունն Ու Կատուն» մանկական օպերաներից, Արմէն Տիգրանեանի «Անոյշ» եւ «Դաւիթ Բէկ», Սպենդիարեանի «Ալմաստ» օպերաներից, Արամ Խաչատրեանի «Գայլիանէ» բալէտից: Ներկայացուած են նաև Ալ. Յարութիւնեանի, Ստեփան Զրբաշեանի, Է. Ցովհաննիսեանի, Դանիէլ Ղազարեանի, Ռ. Աթայեանի<sup>20</sup>, Աշոտ Սաթեանի, Վահագն Արարատեանի, Արամ Սաթունցի, Գ. Սողոմոնեանի, Ա. Հարենցի, Գ. Գեղարիկի, ինչպէս նաև կին կոմպոզիտորներ՝ Սուսաննա Գալիկեանի<sup>21</sup>, Գեղունի Զթշեանի, Վալիա Սամուէլեանի, Սոֆիա Սամուէլեանի, Լիւսիա Սաֆարեանի, Գ. Զերոտարեանի երգերը եւ մշակումները: Դա մեծապէս նպաստեց հայ երաժիշտների ստեղծագործութիւնների լայն ճանաչման եւ երեխաների ինքնուրոյն ստեղծագործութեան խթանման:

Դասագիրքը, որի 1959ի հրատարակման տպաքանակը 3.000 օրինակ էր, շարունակ վերահրատարակւում էր, իսկ նրա տպաքանակը՝ պահանջարկի աճին համաձայն, շարունակ աճում էր: 1961ին եւ 1964ին այն արդէն 5.000 էր, 1967ին հասաւ 10.000, իսկ 1969ին՝ 15.000 օրինակի: Այդուհանդերձ, 1974ին կրկին պահանջուեց նոր վերահրատարակում: Այսպիսով, 15 տարիների ընթացքում դասագիրքը անփոփոխ վերահրատարակուեց 7 անգամ եւ մինչ օրս կիրառում է թէ՛ Երեւանի, եւ թէ՛ մարզերի երաժշտական դպրոցներում:

Այդ ձեռնարկին հետեւեցին մի շաբթ նոր՝ նոյնպէս հայկական երաժշտութեան նիւթերով գրուած սոլֆեջիոյի դասագրքեր, որոնցից նախ եւ առաջ հարկաւոր է նշել Աթայեանի եւ Միքայէլ Տէրեանի կազմած դասագիրքը (Երեւան, 1961), որտեղ օրինակները ներկայացուած են ոչ թէ եւրոպական մաժորմինորային համակարգի համաձայն, այլ ըստ հայ երաժշտութեան ձայնեղանակների: Գնահատելի է նաև, որ ամէն երաժշտական նմոյշ ունի համապատասխան յղում իր աղբիւրին՝ այս կամ այն բանահաւաքի կամ կոմպոզիտորի համապատասխան հրապարակուած կամ ձեռագիր երկի<sup>22</sup>:

Քացախեանի դասագիրքը սկիզբ դրեց մի շաբթ ուսումնասիրութիւնների, որոնք ուղղուած էին հայ երաժշտութեան աւանդովիթներն եւ ընթացիկ կեանքի

երեւոյթները համատեղելու եւ պատշաճ կերպով նոր սերունդներին ներկայացնելուն:

1967ին հրապարակուեց Քացախեանի երաժշտական թելադրութիւնների ժողովածուն, որը նոյնպէս կազմուած էր զուտ հայկական մեզեդիներից: Յատկանշական է, որ Քացախեանի ջանքերով ուու կամ այլ ազգի սոլիֆեջիով նոր ձեռնարկներում տեղադրուեցին նաեւ հայկական նիւթեր<sup>23</sup>: 1987ին՝ յետմահու<sup>24</sup>, լրաց տեսաւ երաժշտական դպրոցների հրդ դասարանի աշակերտների համար Քացախեանի պատրաստած երաժշտական գրականութեան դասադիրքը:

1969 Դեկտեմբերի 1-28՝ Քացախեանը, Խորհրդային Միութեան արուեստագէտների պատուիրակութեան կազմում, գործուղուեց Բաղդադի՝ երաժշտական նոր կրթօջախ հիմնագրելու: 1970 Ծուլիսի 8-14՝ նա մասնակցել է Մոսկուայում կայացած Թ. Համաշխարհային Խորհրդաժողովին (ISME), որը նուիրուած էր երաժշտական կրթութեան հարցերին<sup>25</sup>: Հայաստանի կողմից հրավիրուած էր նաեւ իդ. Միրզոյանը:

Քացախեանը յաճախ մասնակցում էր Հայաստանի Կոմպոզիտորների Միութեան կազմակերպած Հայ կոմպոզիտորների նոր երկերի քննարկումներին: Պահպանուել է դրանցից մէկում արտասանած իր ելոյթի ձեռագիրը, որում նա յորդորում է «մանուկների համար նորք ճաշակով գեղարունատական քարձը որակի ստեղծագործութիւններ» գրել, անդրագառնալով երեխաների համար գրուած երաժշտութեան բոլոր ոլորտներին եւ մանրամասներով ամէնքի պահանջմունքները<sup>26</sup>: Անձամբ ճանաչելով երաժշտներից շատերին, անընդմէջ պահպանելով նրանցից շատերի հետ բարեկամական յարաբերութիւնները, նա մշտապէս լսում էր նոր ստեղծագործութիւնները եւ պարզորոշ կերպով արտայալում էր իր կարծիքը դրանց մասին: Նա ուշադիր լսում էր ուսուցիչների կարծիքները այդ ստեղծագործութիւնների զուտ կատարողական առաւելութիւնների եւ թերութիւնների մասին, եւ իր դրուատանքով կամ քննադատութեամբ, որոնք սովորաբար խորապէս հիմնաւորուած էին լինում, օգնում էր լաւագոյն երկերի լայն ճանաչմանը, ինչն իր հերթին նպաստում էր ժողովրդի գեղարուեստական ճաշակի բարձրացմանը: Մասնակցում էր նաեւ երաժշտական կրթութեան խնդիրների քննարկումներին մամուլում<sup>27</sup>:

Առհասարակ, Քացախեանին իբրև մարդու եւ մասնագէտի բնորոշ գիծը ուշադրութիւնն էր մարդու՝ յատկապէս ստեղծագործող մարդու նկատմամբ: Նա հիանալի հասկանում եւ զգում էր նրանցից ամէն մէկի հոգեբանութիւնը, ակներեւ հեշտութեամբ շփման եղբեր գտնելով եւ երեխաների, եւ մեծերի հետ<sup>28</sup>: Նրա բացառիկ լիշողութիւնը թոյլ էր տալիս անսխալ վերականգնել ամէնը, ինչ կապուած էր տուեալ անձնաւորութեան հետ, սակայն նա երբեւից իր գիտալիքն ի չարի չէր կիրառում եւ նոյնիսկ ծայրատիճան վրդովուած լինելով, նախընտրում էր կրկին բարի եւ կամեցող վերաբերմունք ցուցաբերել:

Սոլիֆեջիոյի դասագրքի, սոլիֆեջիոյի թելադրութիւնների եւ երաժշտական գրականութեան դասագրքից բացի, Քացախեանը թողել է նաեւ անտիպ աշխատութիւններ՝ «Սոլիֆեջի Առարկայի Դասաւանդման Մեթոդիկա», «Երաժշտական թելադրութեան Դասաւանդման Մեթոդիկա», «Ալ. Սպենդիարեանի Անուան Երաժշտական Դպրոցում Ընդունելութեան Քննութիւնների Անցկացման Մեթոդիկա» եւ «Երաժշտատեսական Առարկաների Դասաւանդման 50 Տարուայ Փորձը Հայաստանում»:

1960ի Նոյեմբերի 24ին Քացախսեանին շնորհուեց Հայաստանի Խորհրդային Հանրապետութեան Վաստակաւոր Ուսուցչի կոչում: Նա պարզեւատրուել է «Հայրենական Մեծ Պատերազմի՝ 1941-45 Տարիներին Քաջակորով Աշխատանքի Համար» շքադրամով (1946), Հայաստանի Հանրապետութեան Գերագոյն Խորհրդի Նախագահութեան Պատուոգրով (1965), «Վ. Ի. Լենինի Մննդեան 100ամեակի Առթիւ՝ Քաջակորով Աշխատանքի Համար» շքադրամով (1970) և «Պատույ Նշան» շքանշանով (1971):

Հեղինէ Քացախսեանը մահացել է 1986 Մեպտեմբերի 13ին:

## ՄԱՆՈԹԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐ

- 1 Քացախսեանի ծննդեան վկայականում նշուած է 1908, որը չի համապատասխանում անձնագրում ամրագրուած եւ այլ բոլոր պաշտօնական փաստաթղթերում հաստատուած 1909 թուին: Այսօր դժուար է ստոյդ պարզաբանել դրա պատճառները, եւ, քանի որ Հեղինէ Քացախսեանի բոլոր յորթեանները նշուած են եղել մէկ տարուայ ուշացումով, ապա եւ, շարունակելով այդ աւանդովմբը, 100ամեակն էլ մէկ տարով պէտք է ուշանար: Սակայն ոչ 2008, ոչ էլ 2009ին որեւէ անգրադարձ նրա անուանը Հայաստանում նկատուեց: Այս համեստ ակնարկը մի փորձ է մոռացութիւնից փրկելունրա աւանդը՝ ի. դարի հայ երաժշութեան պատմութեան համար:
- 2 Գայինեան դպրոցին վերաբերող միակ միշտակումը Քացախսեանի գրառումներում կապուած է Սպիրիդոն Մելիքեանի անուան հետ: Վերջինիս մանկավարժական գործունեութիւնը սկսում է Թբիլիսիի Գայինեան դպրոցից, որտեղ նա տալիս էր երգեցութեան դասեր, ապա Երեւանում 1925ին Միասնիկեանի Անուան Դպրոցում կազմակերպել էր երգեցիկ խումբ (Սպիրիդոն Մելիքեան, Ազգային Արժիք (ԱԱ), Ֆոնդ 1274, ցուցակ 3, գործ 10, ձեռագիր):
- 3 Մինչ օրս պահպանուել է նրա պատմութեան տետրը, գրուած շատ գեղեցիկ մանր ձեռագրով, որում նա, Հաւանաբար, կատակի համար, նշել է տեսրակի աւարտի պահը՝ «1928 թուի Մարտի 14ին ժամը 12ին», ինչպէս նաև այդ «պատմական իրադարձութեանը ներկայ իր բոլոր ընկերութիւնները են տեղը»:
- 4 Տե՛ս՝ Armen Budagian, *Yerevanskaya Gosudarstvennaya Konservatoria Imeni Komitasa - 85*, (Երեւանի Կոմիտասի Անուան Պետական Կոնսերվատորիա - 85), Երեւան, 2008, էջ 10, 19:
- 5 Կոմիտասի անունով այն կոչուել է աւելի ուշ, 1948 Դեկտեմբերին՝ Մշակոյթի Նախարարութեան ընդունած առանձին որոշմամբ:
- 6 Այդ դասերը նա վարում էր ոչ-պաշտօնական կարգով՝ իր ընտրած ուսանողների համար:
- 7 Քացախսեանների ընտանեկան արխիւում պահպանուել է Միասնիկեանի Անուան Աշխատանքային Ա դպրոցի կողմից տրուած աւարտական վկայականը, որտեղ թուարկուած են ամսեղ դասաւանդուած բոլոր առարկաները: Այդ ցուցակում կան՝ «Երաժշտութիւն Եւ Երաժշտոր, Մերոպիկա», «Նկարչութիւն Եւ Նկարչութ. Մերոպիկա», «Նկարչութիւն Եւ Նկարչութ. Մերոպիկա»: Քացախսեանի դպրոցական դասընկերունի գեղանկարչունի Հեղինէ Արրաջամեանը Հաւաստեց, որ երաժշտութեան հետ Սպ. Մելիքեանը դասաւանդում էր երաժշտութեան մեթոդիկա եւ աւելացրեց, որ նկարչութեան մեթոդիկան նոյնպէս դասաւանդուում էր:
- 8 Սպ. Մելիքեանի դասաւանդման արմատներ թերեւս պէտք է փնտուել հայկական ձայնանիշերով զրուած երգի ձեռնարկների մէջ: Այդպիսիք լոյս էին տեսել ԺԹ. դարի վերջում եւ կիրառում էին հայ դպրոցներում նաև ի. դարի սկզբում: Դրանց շարքին է նիկողայու թաշնեանի Դասագիրք Եկեղեցական Զայեագրութեան Հայոց դա-

սագիրքը (Լիմիածին, 1874), «րին յաջորդել էին Եղնիկ քահանայ Երգնկեանցի Դասագիրք Հայկական Զայնագրութեան (Լիմիածին, 1887) և Արշակ Բրուտեանի Հայքական Եկեղեցական Մխական Երկրասեան Ռևուլյոնասիրութիւնների Ըւ Միջնակարգ Դպրոցների Համար (Լիմիածին, 1890) դասագրքերը Համեմատելով դրանք Սպ. Մելիքեանի կազմած Դասագիրք Երգեցողութեան։ Ժողովածու։ Հայկական ժողովուրդական, Ազգային Ըւ Երուպական (Թարգմանած) Միամայն Երգերի (երկու մասից, երկուսն էլ՝ Թիֆլիս, 1912) ձեռնարկի հետ, Նախանառուած եւ ծխական, եւ թեմական դպրոցների համար, կարելի է նկատել, որ էտիմեամբ եւ բովանդակութեամբ նա հետեւում է իր նախորդների՝ յատկապէս Երգնկեանցի դասագրքի հիմնական սկզբունքներին։ Ի դէպ, վերջինիս դասագիրքը բաւականին տարողունակ եւ հիմնաւոր է, իսկ նրա նախարանում զետեղուած է 1886 Դեկտեմբերի 15ին Թիֆլիսում Հեղինակի յօդուածը՝ «Մի Բացատրութիւն Հանրակրթական Դպրոցների Երաժշտութեան Ռևուլյոնի Համար»։ որն այսօր էլ չի կորցրել իր մեթոդաբանական նշանակութիւնը։ Ի տարրերութիւն Երգնկեանցի, Սպ. Մելիքեանը ընդամենը մէկ բացառութեամբ, որն «Մվ. Հայոց Աստուած» երգն է, զետեղել է իր ձեռնարկում աշխարհիկ ժողովրդական եւ հեղինակային երգեր։ Երկրորդ տարրերութիւնն աւելի ակներեւ է։ Սպ. Մելիքեանի ձեռնարկը, ինչպես նաև մէկ տարի յետոյ Սանկտ-Պետերբուրգում հրապարակուած Ռ. Մելիքեանին եւ Ա. Մանուկեանի կազմած Երաժշտական Ալբենարանը, գրուած են երոպական, այլ ոչ Հայկական ճայնանիշներով։ Սակայն բոլոր յիշատակուած ձեռնարկները, բացառութեամբ Սպ. Մելիքեանի ձեռնարկին, ունեն մէկ ընդհանուր թերութիւն։ Նրանցում չի նշուած երգերի հեղինակների անունները։ Հարկաւոր է ասել, սակայն որ Սպ. Մելիքեանն էլ հետեւողական չի գտնուել իր գաղափարի նկատմամբ։ Նա նշել է ոչ-բոլոր երգերի հեղինակներին եւ մի քանի դէպքերում նշել է ոչ թէ երգի անուանումը, այլ երգի առաջին բառերը (օրինակ, «Էտալացի Աղջկայ Երգը» նա ներկայացրել է որպէս «Մեր Հայրենիք» առանց նշելու երգի կոմպոզիտորին եւն։) Միւս կողմից, այդ ձեռնարկում հայ ժողովրդական երգերն ու պարեղանակները որպէս արդպիսիք ներկայացուած են աշակերտութեանը։ Դա թոյլ տուեց ուսուցման մէջ ընդգրկել նաև երաժշտագիտական-ազգագրական որոշ տարրեր։ Սպ. Մելիքեանին նուիրուած իր ակնարկում Քացախեանը նշել է. «Պետք է ասել, որ այդ շրջանում ոչ միայն Սպ. Մոլիքեանն եր աշխատում հանրակրթական դպրոցում, այլև մեր լարագոյն մանկավարժներ՝ կոմպոզիտոր Միքայէլ Միքոյեանը, Ազատ Մանուկեանը, Ռոմանոս Մելիքեանը։ Բոլորն էլ ազգային երգեր համարում էին սրբութիւն եւ մատաղ սերնդին դաստիարակում էին ազգային ոգով» (Մայրիդոն Մելիքեան, նոյն)։ Վերջինս Կոնսերվատորիայում Մանկավարժական Ֆակուլտէտի ստեղծման նախաձեռնողներից մէկն էր։ Ի դէպ, Ֆակուլտէտի առաջին խմբի 40 ուսանողներից աւարտեցին միայն չորս հոգի, որոնցից երեքը՝ Սաթիկ Ասլամազեանը, Մուսաննա Վարդանեանը եւ Հեղինէ Քացախեանը նուիրուեցին երաժշտական մանկավարժութեան գործին։

<sup>9</sup> Նկարագրելով Մելիքեանի դասաւանդման մեթոդը, նա գրել է. «Նրա դասաւանդման հիմքը հայկական ժողովրդական երգն էր։ Սպիրիդոն Մելիքեանը տսուցանում էր երեխաներին հայկական երգեր, օրինակ՝ Հոյ-Նար, Աղուսը, Զաղցի Դոնով և այլն, ինքը կատարում էր խօսքերով, ապա երեխաները գտնում էին նոտաները, տեսլութիւնը, ապա զրում զրատախտակին եւ արտագրում տեսրերում։ (...) Ամենազլիստորը, երգի ուսուցումը կատարում էին կամերտոնվ, առանց դաշնամուրի օգնութեան։ Սպիրիդոն Մելիքեանի մերողիկայում զնահատելին այն է, որ նա դատիարակում էր երեխաներին հայկական ժողովրդական երգի ինտոնացիայով, բացի այդ կամերտոնի գործածութիւնը զարգացնում է երեխաների մէջ ինտոնացիայի մարդութիւնը։ Ցաւօք սրտի պիտի ասել, որ իմաս օգտագործում նոր շատ թիշ» (նոյն), ի դէպ, պահպանուել է Սուրէն Զարեկեանի՝ Սպ. Մելիքեանին պատկերող մի

երգիծանկար, որում պարզ երեւում է ձեռքում բարձր պահած կամերառնը (Budagian, էջ 39).

<sup>10</sup> Ակզրում այն քառամեայ էր: 1930ին նրան չնորհուեց Սպենդիարեանի անունը, իսկ 1935ին այն դարձաւ եօթնամեայ (Ա. Մպենդիարեանի Անուան Երաժշտական Մասնագիտական Դպրոց - 75, կազմ՝ Նոնա Ռոկանեան, Երեւան, 2006): 1993ից դպրոցում գործում են նաև բարձր դասարաններ եւ փաստորէն այն տասնամեայ է դարձել սակայն մինչ օրս դպրոցի պաշտօնական կարդավիճակը՝ որպէս եօթնամեայ դպրոցի, անփոփոխ է: Սպենդիարեանի անուան պատիւը բարձր պահերու անհրաժեշտութեան գիտակցութեամբ, նա սերտօրէն համագործակցեց Սպենդիարեանի տուն-թանգարանի հետ եւ դարձաւ «Սպենդիարեանականների Ակումբ»ի նախաձեռնող խմբի անդամ: Հաւաքելով դպրոցի պատմութեան համար կարեւորութիւն ունեցող արձանագրութիւններ, նամակներ, լուսանկարներ, ծրագրեր եւ յուշանուէքներ, նա յոյս ունէր երբեից տեսնել սիրելի դպրոցի պատմութեան մի թանգարան: Յաւոք, այն ստեղծուեց նրա մահուանից յետոյ, երբ դպրոցի տնօրէնը դարձաւ ջութակահար եւ խմբավար Մերուժան Միմոնեանը: Վերջինիս ջանքերով եւ նոյնպէս նրա նախկին աշակերտ՝ գործարար Ռուբէն Յարութիւնեանի չնորհիւ 1998ի Նոյեմբերի 26ին բացուեց հետաքրքրական եւ գեղեցիկ մի թանգարան, որին չնորհուեց Հեղինէ Քացախեանի անունը՝ որպէս դպրոցի հիմնադիրներից մէկի: Յաւոք, թանգարանն երկար չգոյատեւեց:

<sup>11</sup> Անդրադառնալով այդ տարիների դասաւանդման իր փորձին, Քացախեանը գրել է: «Մենք շատ լավ ծանօթ էինք հայկական մանկական երաժշտութեան հետ. Ա. Տեր-Ղաննեան, Ռ. Մելիքեան, Ա. Մանուկեան, Ա. Մայիկեան, Մ. Միրզայեան, Մ. Մագնանեան: Գիտէինք ուսական, արեւմտաեւրոպական կոմպոզիտորների ստեղծագործութիւնները: Մեր դասաւանդման մերոյիկան բազմազան չէր, բայց հետաքրքրուցնում էինք երեխաներին» («Սոլֆեջիոյի Եւ Երաժշտական Գրականութեան Դասաւանդման Առաջընթացը 1930 թուից Առ Այսօր» (մինչեւ 1984), ՀՀ ԱԱ, Փ. 274, գ. 3, գ. 18):

<sup>12</sup> Այդ մանկապարտէզի հետ կապուած Քացախեանը, որին մանկապարտէզի երեխաներն անուանում էին պարզապէս «ընկեր էլիա», մի հետաքրքրական դէպք է պատմել Մի օր մանկապարտէզ էր այցելել Մոսկուայից Երեւան ժամանած դեռեւս ոչ-այդքան յայտնի կոմպոզիտոր՝ Արամ Խաչատրեանը: Նա եկել էր երեխաների երաժշտական տուեալները՝ լսողութիւնը, կշռոյթի զգացողութիւնը եւն. ստուգելու, քանի որ նա մտահոգուած էր ընդունակ երեխաների յետագայ երաժշտական կրթութեան հարցերով: Երեխաներից մէկը՝ փոքրիկ Առնօն մի խաղ է առաջարկում Մոսկուայից եկած «քեռուն»: Ասում է. դու մի նոտայի հարուածիր, իսկ ես քեզ կ'ասեմ, թէ դա որ նոտան է: Այդպէս, մի մանկապարտէզում, կայացաւ երկու հայ մեծ կոմպոզիտորների՝ Արամ Խաչատրեանի եւ Առնօն Բարաջանեանի առաջին հանդիպումը, որը ինչ-որ տեղ կանխորոշեց վերջինիս ճակատագիրը: Հասկանալի է, որ այդ խաղին փոքրիկ Առնօն ծանօթացել էր «ընկեր էլիա»ի չնորհիւ, որի մօտ եւ շարունակել էր իր ուսումը Ալ. Մպենդիարեանի Անուան Երաժշտական Դպրոցում:

<sup>13</sup> Հետաքրքրական է, որ Քացախեանի համար չականջ ասածը, ի տարրերութիւն «լսողութեան», մի տեսակ փիլիսոփայական, բայց միաժամանակ խիստ գործնական նշանակութիւն ունէր: Դա մարդու ֆիզիկական բնութեան եւ նրա հոգեւոր կերտուածքի իւրատեսակ մի չափանիշ էր: «Ականջ ունեցող» նա անուանում էր ոչ միայն լաւ լսողութիւն ունեցող երաժիշտներին, այլ նրանց, ում աշխարհընկալումը լսողական տեսակի էր եւ նրանում վառ կերպով արտայայտուած էին այդ անձնաւորութեան ճաշակը, բնազդը եւ ինտելեկտը իրենց միասնութեամբ: Դա մշտապէս արտասանում էր յարգանքով եւ հաւատով, նոյնիսկ եթէ այդ ականջ ունեցողը մի փոքր երեխայ լինէր: Իսկ «ականջ չունի» նա ասում էր ամենածալրայեղ դէպում, երբ իր

Համար պարզ էր դառնում, որ, այդ անձնաւորութեան համար երաժշտութեան մէջ որեւէ անմիջ չկայ:

<sup>14</sup> Եղիշէ Զարենցի Անուան Գրականութեան Ըլ Արուեստի թանգարանում պահպանում է Բարաջանեանի «Միտներական Քայլերգ» ձեռագիրը, որը նա գրել է 9 տարեկան հասակում Զարենցի մակագրութեամբ: Դա կոմպոզիտորի ամենաառաջին տպագրուած ստեղծագործութիւնն է (ԳԱԹ, Ա. Բարաջանեանի Անուան Ձոնդ):

<sup>15</sup> Արձագանգելով Քացախեանին փաստակաւոր ուսուցիչ կոչման շնորհմանը, կոմպոզիտոր Միրզոյեանը գրել է: «Հիանալի արդինքներ է տոմի երաժշտութեան այդ համեստ մշակի գործունեութիւնը: Ե. Քացախեանի ծերի տակով անցել է 1.000ից ավելի աշակերտ: Նրանցից շատ-շատերը, ինչպէս պէտք էր սպասել, այժմ դարձել են երաժշտութեան ասպարեզի ճանաշուած և անուանի մասնագետներ: Ահա անունների մի շաբք, որը կարող է պատի բերել ամէն մի ուսուցիչ: Կոմպոզիտորները Ա. Յարաջանեան, Ա. Սարեան, Ե. Թովհաննիսեան, Ջ. Տէր-Թաղեւուան, Ա. Աճեման, միջազգային մրցանակարաշխութեան լաուրեատներ են: Եղիգարեան, Ժան Տէր-Մերկերեան: Քացախեանի այս ու շատ ու շատ աշակերտներ միշտ մեծ երախտագիտութեամբ ու սիրով են յիշում հարազատ ուսուցչունու անունը» («Մեր Ուսուցիչը, Մեր Ընկեր Էլիան», Երեկոյան Ծրեւան, 15 Դեկտեմբեր 1960):

<sup>16</sup> Քնարիկ Գրիգորեանը յայտնի է որպէս Սպենդիարեանի կեանքի եւ գործունէութեան հետեւողականօրէն ուսումնասիրող երաժշտագէտ: Նա ոչ միայն հեղինակ է Ալ-Սպենդիարեան: Կեանըը Ըստեղծագործութիւնը ուսումնասիրութեանը (Երեւան, 1952), այլև կազմել, խմբագրել եւ ներածական յօդուած է գրել Սպենդիարեանի գրական ժառանգութեան՝ յուշերի եւ նամակների հրապարակման համար՝ Alexander Spendiarian. Vospominanija, Ristma (Ալեքսանդր Սպենդիարեան, յուշեր, նամակներ), Երեւան, 1962: Քացախեանին եւ Գրիգորեանին միաւորում էին սէրն ու նուիրումը աշխատանքի եւ մեծ կոմպոզիտորի արուեստի նկատմամբ: Նրանք սպենդիարեանականների ակումբի հիմնադիր անդամներից էին: «Միրելի ուսուցչունուս, ընկերունուս, կոլլեգայիս Էլիային՝ լաւագոյն ցանկութիւններով»՝ այսպէս է մակագրել Գրիգորեանը իր գրքերից մէկը, նուիրելով այն Քացախեանին եւ այն յատկանշական է նրանց պարզ, չերմ եւ անմիջական յարաբերութիւնների համար:

<sup>17</sup> Ալ. Սպենդիարեանի Անուան Դպրոցի տնօրիններից երկուսը՝ Բարկէն (Բորիս) Սարգսեանը (1958-82) եւ Մերուժան Սիմոնեանը (1997-99) նոյնպէս նրա աշակերտներն են եղել: Մանկավարժութեան ասպարէզում երկար տարիներ աշխատում էին նաև Պետրոս Հայկազեանը, Էլզա եւ Ռոզա Թանդիեանները, Տատիանա Հայրապետեանը, Անահիտ Շահրազեանը եւ շատ ուրիշներ:

<sup>18</sup> Այն տարիներին Երեւանի Կոնսերվատորիայում նրան դասաւանդում էին Վարդգէս Տալեանը (հայ երաժշտութեան պատմութիւն և պոլիֆոնիա), Հայկ Գիւլիքէօխվեանը (գրականութիւն եւ էսթետիկա), Գէորգ Մանկալեանը (թատրոնի պատմութիւն), Զաւէն Վարդանեանը (երաժշտութեան պատմութիւն), եւն. Ուսանողական տարիներից պահպանուել են նրա գրառումները, որոնցից շատ հետաքրքիր է «Հայ Երգը Իր Ճիւղերով» ուսումնասիրութիւնը (ՀՀ ԱԱ Ֆ. 1274, ց. 3, գ. 12):

<sup>19</sup> Երեւանի Կոմիտասի Անուան Պետական Կոնսերվատորիայի Ժողովրդական Ստեղծագործութեան Ամբիոնում պահպանուող Ազատ Մանուկեանի կազմած Փնջիկ Մանկական Երգարանի մէջ միակ հոգեւոր նմուշի՝ # 21 «Ալօթք» երգի վրայ մեծ խաչ է քաշած: Ի դէպ, Սպ. Մելիքեանի կազմած ժողովածուի միակ հոգեւոր նմուշը՝ Մակար Եկմալեանի «Մվ», Հայոց Աստուածու երգը խորհրդային տարիներից մինչ օրս հնչում է արտպէս կոչուած «դաւաղլարար»: Ճիշտ է, այդ դէպքում, երաժշտութեան ընոյթը պահպանելով, որոշակի վերափոխման են ենթարկուել երգի բառերը: այժմ այն հնչում է որպէս «Մվ», Հայոց Աշխարհ»: Այնուամենայիւ, երաժշտութեան լիցքը

- եւ կատարման յստակօրէն վեհ եղանակը նոյնիսկ այդ չէզոք խօսքերի գէպքում խոր ու ազդեցիկ տպաւորութիւն են գործում: Ի տարրերութիւն երդի ճշգրիտ խօսքերով կատարմանը, որի ազդեցութեան մէջ մեծ է զիտակցականորէն աղօթքն ասելու տրամադրուածութեան դերը, փոփոխութեան ենթարկուած տարրերակի լիցքը աղդում է առաւելապէս ենթագիտակցութեան վրայ Հետաքրքրական է, որ Քացախ-եանի խիզախումը՝ զուտ հայկական նմուշներով սոլֆեջիոյի ձեռնարկ գրելու եւ պետական պատուէրով այն լոյս ընծայելու 1959ին, երբ Ստալինի մահուան օրից անցել էր ընդամենը Յ տարի, խթանեց նոր աշխատանքներն այդ ուղղութեամբ: Արդէն 1961ին Քացախսանի Մոլֆեջիոի խմբագիր՝ երաժշտագէտ Աթայեանի եւ խմբավար Տէրեանի համատեղ աշխատանքով լոյս տեսաւ մի նոր սոլֆեջիոյի ժողովածու, որում արդէն ընդգրկուած էին Կոմիտասի «Տաղք Եւ Ալելուք», ինչպէս նաև Եկմալեանի «Պատարագ»ի հատուածները:<sup>20</sup>
- <sup>21</sup> Իր գործունէութեան սկզբնական շրջանում յայտնի երաժշտագէտ Աթայեանը ստեղծագործում էր, եւ դա շատ կարեւոր է հասկանալու համար նրա կատարած աշխատանքի, մասնաւորապէս Կոմիտասի ստեղծագործութիւնների խմբագրութեան հետ կապուած հարցեր:
- <sup>22</sup> Սուսաննա Գալիկեանը ոչ միայն մանկական երգերի, այլև կարեւոր նշանակութիւն ունեցող մի ձեռնարկի՝ Նախադպրոցական Երաժշտական Խաղերի Եւ Պարերի Ձեռնարկի հեղինակ է: Այն հրատարակուել է Երեւանում, 1961ին:
- <sup>23</sup> 1965ին լոյս տեսաւ նոյն հեղինակների երկայն Եւ Եռաձայն Մոլֆեջիո ձեռնարկը, գրուած նոյն՝ ակադեմիական ոճով: Այդ գասագրքերը մեծ մասամբ կիրառուում են երաժշտական ուսումնարաններում եւ Կոնսերվատորիայում, դպրոցներում աւելի սակաւ: 1977ին հրապարակուեց Սոֆիա Սամուէլեանի եւ Ստեփան Նաղեանի կազմած սոլֆեջիոյի դասագիրքը, որը հայ եւ երուպական կոմպոզիտորների երաժշտական օրինակներից բացի առաջարկում է նաև յատուկ մշակուած ձայնավարժութիւններ, որոնք օգնում են երեխաներին ընկալել այս կամ այն դասի երաժշտական նիւթը: Այն վերահրատարակուել է 1982ին եւ մինչ օրս յաջողութեամբ կիրառուում է երաժշտական դպրոցներում: 1980ին լոյս տեսաւ Եուրի Գէորգեանի եւ Յ. Բեքարեանի Մոլֆեջիո դասագիրքը, որում արտայայտուել է հեղինակների նոր մօտեցումը առարկայի հանդէպ:
- <sup>24</sup> Պահպանուել են նրա գործընկերներ՝ Մարիա Պաւլովնա Անդրէեւայի եւ այլոց հետ նամակագրութիւններ, որտեղ ասւում է Հայկական երաժշտութեան նմուշների ներմուծման մասին այդ հեղինակների ձեռնարկներում: «Ես ունեմ հայկական սոլֆեջիոյի երկու ձեռնարկներ, որոնք Դուք ինձ նուիրել եք,- գրել է Անդրէեւան, - Այստեղից որոշ մեղեդիներ ես արդէն փոխառել եմ: Ցանկալի կը լիներ հայկական երգեր լինեին նուազակցորդեամբ, ուսերեն քարզմանուած տերստով՝ որեւէ մի գեղարուեստական գործ» (ԱԱ, Փոնդ 1274, ցուցակ 3, գործ 23, ձեռագիր): Նման խնդրանքները շատ էին ուրախացնում Քացախսանին, եւ նա մշտապէս սիրով կատարում էր զրանք: Մենք՝ աշակերտներս, ապրում էինք հանելի զարմանքի պահեր, երբ նոր լոյս տեսած ուռւական ձեռնարկներում գտնում էինք մեր երգերը, որոնցից ոմանք կարող էին դեռեւս մեզ անծանօթ հայկական ժողովրդական երգեր լինել, եւ դա էլ աւելի հետաքրքիր էր դարձնում մեր դասերը:
- <sup>25</sup> Քացախսանը ցանկանում էր, որ առնուածն իր այդ դասագիրքը լոյս տեսնի պատկերագրդ՝ գունաւոր նկարներով, որպէսզի երեխաների համար այն լինի առաւել հաճելի եւ տրամադրող: Սակայն այդ ցանկութիւնը ոչ ոք չէր շտապում կատարել, եւ սպասելով, որ այդ ցանկանութիւնը ընձեռնուի, նա յետաձգում էր գրքի լուրն ծայրումը: Ի վերջոյ, հասկանալով, որ օրհնաւական պահը մօտեցել է, տպարանի աշխատողներն 1986ին արագացնում են տպագրման աշխատանքները, բայց եւ այնպէս

- իր վերջին դասագիրքը պատկերազարդ տեսնելու ցանկութիւնը մնում է չիրականացուած:
- <sup>25</sup> ISME – International Society of Music Education: Նրա ելոյթի բնագիրը չի պահպանուել, սակայն պահպանուել են նրա գրառումները խորհրդաժողովին ելոյթ ունեցած մի շարք այլ հեղինակների մասին. իր սովորութեան համաձայն, Քացախսեանը մշտապէս գրանցում էր ամէն մի նորոյթ, որը կարող էր օգտակար լինել երաժշտական կրթութեան ասպարէզում: Իր անաւարտ «Առջեղջոյի Եւ Երաժշտական Գրականութեան Դասաւանդման Առաջընթացը 1930 թուից Առ Այսօր» (մինչեւ 1984) երկում Քացախսեանը ներկայացրել է բազմաթիւ բաց դասեր, մեթոդական զեկուցումներ, խորհրդաժողովներ, Մոսկուալի, Լենինգրադի (Մ. Պետերբուրգ), Վիլինիուսի, Տալլինի, Ռիգայի, Խարկովի, Մինսկի, Թբիլիսիի, Բաքուի գործակիցների հետ, որոնք տեղի են ունեցել նշուած ժամանակամիջոցում (ՀՀ ԱԱ, ֆ. 274, ց. 3, գ. 18.)
- <sup>26</sup> ԱԱ, ֆ.1274, ց. 3, գ. 10 (ձեռագիր) տարեթիւը չի նշուած, ենթադրաբար, դա 60ականներին է: Այդ ելոյթում Քացախսեանը մասնաւորապէս յորդորում էր երիտասարդ կոմպոզիտորներ՝ Սոֆիա Սամուէլեանին եւ Գեղունի Զթշեանին աւելի շատ երգեր գրել երեխանների համար, ասելով, որ նրանք կարող են գրել լաւ երգեր, բայց քիչ են գրում: Այսօր կարելի է ասել, որ Զթշեանը յայտնի է Հայ մանուկների համար գրուած իր բազմաթիւ երգերով: Մանկուց ճանաչելով եւ սիրելով այդ երգերը, ապագայ երաժիշտները յնտագայում սիրով անդրադառնում են նրա վոկալ եւ գործիքային այլ ստեղծագործութիւններին:
- <sup>27</sup> Պահպանուել է Մովմանական Արուեստ ամսագրում նրա ելոյթը երաժշտական կրթութեան ընթացիկ հարցերով:
- <sup>28</sup> «Օր-օրի փոխում է կեանքը, զարգանում ու հարստանում: Պէտք է հասկանալ աշակերտի հոգերանութիւնը, ճանաչել իրաքանչյուրին, որպէսզի հնարաւոր լինի գտնել այն բանալին, որն ամենաարդիննաւէտը կը լինի նրաժշտութեան հիմունքները սովորեցնելու համար: Ամէն անգամ, եթէ պատկերացրել եմ, որ դասարանում սպասող անհամբեր հայեացըներ կան, հնուարդրաասէր ու բանինաց աշակերտներ, կրկին անգամ զգացել եմ, որ շատ զգոյշ պիտի մտնել դասարան, շատ պատրաստուած, որովհետեւ դու պատասխանատու ես քո իրաքանչյուր խօսքի, իրաքանչյուր մեկնարաանութեան համար»՝ ասել է Քացախսեանը Աւանդարդ թերթի թղթակցին (Գոհար Ռշտունի, «Անուն Բարձր Ռւ Վաեմ. Գեղեցիկ Ազրած Օրերի Ռւ սուցիշը», Աւանդարդ, 05.10.1980): Կարծում ենք, նրա այս խօսքերը մշտապէս արդիական են:

---

AN OVERVIEW OF HEGHINE KATSAKHIAN'S  
PEDAGOGICAL AND MUSICAL ACTIVITY  
(Summary)

NATALY HARUTUNIAN  
harutyunyan.natalie@gmail.com

The author brings to the limelight the pedagogical activity of Heghine Katsakhian, who had a significant input in the development of a number of musicians and composers in Soviet Armenia and in the promotion of children's music.

Born in Tbilisi in 1908/09, Katsakhian studied in the newly inaugurated Yerevan Musical Studio under the able directorship of Romanos Melikian. In parallel, she attended the piano classes of Anna Mnatsakanian. After graduating from school, she started working as a piano and music teacher in a kindergarten while she continued her studies in the newly inaugurated Yerevan Conservatory.

In 1931 she graduated from the Conservatory and started working in the first professional music school in Armenia. She taught theory and conducted the school choir. Several renowned musicians graduated from this school, including Edward Mirzoyan, Alexander Harutunian, Adam Khudoyan, Ghazaros Sarian, Gagik Hovunts, Edgar Hovhannessian, Robert Amirkhanian, Martin Vartazarian and many others.

The author narrates the dedication of Katsakhian to music and pedagogy and the effort she put into persuading Armenian composers to compose children's songs and music.

Katsakhian's main contribution, however, was in the field of school textbooks. After dedicating herself totally to schoolwork in 1932, she published her methodology textbook, *Solfegio* in 1959. This was the first musical textbook that included Armenian compositions. In some fifteen years the book had seven reprints with a total of over thirty-five thousand copies, and it is still being used in Yerevan and musical schools elsewhere.

The author assessed the textbook along with a number of similar Armenian textbooks that were published after 1874 and asserts that Katsakhian approached Armenian music teaching in an innovative way and enriched its traditions.